253 Ով Հիսուս, Դու՝ մեծ սիրո աղբյուր,

1. Ով Հիսուս, Դու՝ մեծ սիրո աղբյուր,
Օգնի՛ր, որ ես էլ, Տե՛ր, սիրող լինեմ,
Ով Հիսուս, Դու՝ խնդության աղբյուր,
Շնորհի՛ր, որ ես էլ, Տե՛ր, ուրախ լինեմ:

Ոչնչություն եմ, Տե՛ր, հող ու մոխիր եմ, Տե՛ր,
Բայց Դու ների՛ր իմ հանցանքներն,
Խնդրում եմ, Տե՛ր, լսի՛ր իմ շուրթերից
Հառաչանքն այս իմ սրտի խորքից.
Ողորմեա՛, իմ Տե՛ր:

2. Ով Հիսուս, խաղաղության աղբյուր,
Օգնի՛ր, որ ես էլ, Տե՛ր, խաղաղ լինեմ:
Ով Հիսուս, համբերության աղբյուր,
Շնորհի՛ր, որ ես էլ, Տե՛ր, միշտ համբերեմ:

3. Ով Հիսուս, Դու՝ քաղցրության աղբյուր,
Օգնի՛ր, որ ես էլ, Տե՛ր, քաղցր լինեմ:
Ով Հիսուս, Դու՝ բարության աղբյուր,
Շնորհի՛ր, որ ես էլ, Տե՛ր, բարի լինեմ:

4. Ով Հիսուս, Դու՝ հավատքի աղբյուր,
Օգնի՛ր, որ ես էլ, Տե՛ր, միշտ հավատամ:
Ով Հիսուս, Դու՝ հեզության աղբյուր,
Շնորհի՛ր, որ ես էլ, Տե՛ր, միշտ հեզ լինեմ: